ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆՈՐ ՂԵԿԱՎԱՐՆ Է ՄԵԼԱՆՅԱ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԸ

05.02.2015 18:58

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը 2015թ. փետրվարի 3-ին փաստաբանների պալատի խորհրդի անդամ, փաստաբան Մելանյա Առուստամյանին նշանակել է Հանրային պաշտպանի գրասենյակի նոր ղեկավար՝ չորս տարի ժամկետով:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը այսօր Հանրային պաշտպանի գրասենյակի աշխատակազմին է ներկայացրել Հանրային պաշտպանի գրասենյակի նոր ղեկավարին: Հանրային պաշտպանի նախկին ղեկավար Մասիս Ղազանչյանը ազատվել էր աշխատանքից սեփական դիմումի համաձայն:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը նոր ղեկավարին ներկայացնելիս շնորհակալություն է հայտնել Մասիս Ղազանչյանին արդյունավետ աշխատանքի և Հանրային պաշտպանի գրասենյակի կայացման հարցում ունեցած անգնահատելի ավանդի համար և նոր ղեկավարին մաղթել է բեղմնավոր աշխատանք ի շահ փաստաբանական ինստիտուտի և մասնավորապես հանրային պաշտպանի գրասենյակի զարգացման:

Մելանյա Առուստամյանը շնորհակալություն հայտնելով փաստաբանների պալատի խորհրդից՝ նման պատասխանատու պաշտոնն իրեն վստահելու համար, համոզմունք է հայտնել, որ ջանք ու եռանդ չի խնայի արդարացնելու թե՛ խորհրդի անդամների և թե՛ հանրային պաշտպանների հույսերը:

Հիշեցնենք, որ Հանրային պաշտպանի ղեկավարին բաց քվեարկության ընթացակարգով նշանակում է Հայաստանի փաստաբանների պալատի խորհուրդը, իսկ ղեկավարի թեկնածությունն առաջարկում է Փաստաբանների պալատի նախագահը:

Բեռնել կենսագրությունը

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })